Նորին Օծութիւն Վեհափառ Հայրապետն Ազգիս Տփխիսից Հոկտեմբերի 18ին՝ Նորին Կայսերական Մեծութեան Թագաւոր Կայսեր և Նորա Օգոստափառ Ընտանեաց նոյն ամսոյ 17ին պատահեցած վտանգից Նախախնամութեան շնորհիւ ազատուելու առթիւ՝ հետևեալ հեռագիրն էր ուղղած Ներքին գործոց Տ. Նախարարին՝ Նորին Մեծութեանը զեկուցանելու համար:

“Շնորհիւ Նախախնամութեան Ամենաբարձրելոյն, վտանգն, որ սպառնայր կենաց Ձերդ Մեծութեան և Օգոստափառ Ընտանեացդ, իբրև ել՝ յուրախութիւն և յերջանկութիւն հաւատարիմ հպատակաց Ձերոց. Տէր Աստուած յայտնեաց զողորմութիւն իւր և զսքանչելիս, լսելով ջերմ աղօթից բնակչաց Ձերով այցելութեամբ բաղդաւորեալ Կովկասու: Հայաստանեայցս եկեղեցի և Ազգն Հայոց անդադար վերառաքեն զաղօթս իւրեանց յԱթոռ Ամենաբարձրելոյն, վասն պարգևելոյ Ձերդ Կայսերական Մեծութեան և Օգոստափառ Տանդ զմեծութիւն, ըզփառս և զերկարութիւն աւուրց:

Ի պատասխանի այս հեռագրի Նորին Օծութիւնն ստացաւ Կովկասու Գլխաւոր Կառավարչապետից համարաւ 10,881 հետևեալ գրութիւնը:

Թագաւոր Կայսրն ի վերայ ամենահրապատակօրէն զեկուցման հեռագրի Ձերդ Սրբութեան՝ ուղղելոյ յանուն Տ. Նախարարի Ներքին գործոց՝ ի պատճառս հրաշալի ազատութեան Նոցին Կայսերական Մեծութեանց և Օգոստափառ Որդւոց Նոցին ի փորձանաց ի ժամ խորտակման Կայսերական գնացից երկաթուղւոյ ի 17 Հոկտեմբերի, ամենողորմածաբար բարեհաճեցաւ իսկական ձեռամբ իւրով մակագրել «Ի ՍՐՏԻՆ ՀՆՈՐՀԱԿԱԼ ԵՄ։»

«Այս բարձրագոյն շնորհակալութիւն հասուցանելով ի գիտութիւն Ձեր և յանձն առնելով զիս հովուապետական աղօթից Ձերոց, պատիւ ունիմ լինիլ

Ձերդ Սրբութեան

ամենախոնարհ ծառայ

ԻՇԽԱՆ ԴՈՆԴՈՒԿՈՎ ԿՈՐՍԱԿՈՎ։